

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

## Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>

E-mail: [info@artsakhlis.am](mailto:info@artsakhlis.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



«Ազգ եւ ժառանգություն»  
Համահայկական  
Երիտասարդական  
գիտաժողով



Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն  
Ստեփանակերտ  
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՅ մշակույթի Եւ երիտասարդության հարցերի նախարարություն  
ԼՂՅ կրթության, մշակույթի Եւ սպորտի նախարարություն  
ՀՅ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման  
կենտրոն» ՊՈԱԿ  
ԼՂՅ մշակույթի Եւ երիտասարդության պալատ

«Ազգ Եւ ժառանգություն»  
համահայկական  
երիտասարդական  
գիտաժողով

Մեպտեմբեր 26-30 2006 թ.  
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Պարաբաղի Յանրապետության  
հոչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

- Ա. Խանյան -քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
գիտության վաստակավոր գործիչ
- Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
- Ա. Մինիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
- Ը. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս
- Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում գետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած  
Յամահայկական երիտասարդական գիտաժողովի գեկուցումները

Մեծավ մասամբ բառերն ընկալելիս մենք օգտվում ենք միայն մեր լսողական զգայարաններից մյուս բոլոր զգայարաններին հանգատի ուղարկելով, մինչդեռ բառերի «չերևացող մասերը» ընկալելու համար հենց նրանց օգնության կարիքն ունեինք: Երբ իր բանաստեղծության մեջ Վ. Դակորյանը արտաբերում է «քար», «առավոտ», «լուս» բառերը, նա ընթերցողից պահանջում է զգայարանների ամբողջական ներկայություն լսված բառերի էռլրյան խորքը ներթափանցելու համար.

...և մի հանդուրժեք ոչ մի միջնորդաբառ,

որ չսպանվեն քարը, լուսն ու առավոտը

Որբերտ Եսայանը գրում է «Անկրկնելի Վիճակներով հաղորդակցվելով ժամանակի հետ բանաստեղծն ավելի է ընդգծում բառի բնավորությունը, որոնք բացահայտվում են ոչ միայն զգացնունքների շիկացնան պահին, այլև ողջ ստեղծագործության արարման ընթացքում»: Վ. Դակորյանի բանաստեղծություններում բառերը պարզապես միջոց չեն հերթական պատկերը, տողն ու ռիթմը ստեղծելու համար, այլ հոգու հանգստության բարգմանիչն են, որոնցում ներդրված լարումը յուրաքանչյուր ընթերցող ընկալում է իր հոգեկան աշխարհի բարձրունքներից:

### Թանաքարա Թոշարյան «Միասնություն» ԱՄԵԿ

#### ճանապարհ բազում ելքերով

Գրականությունը գրողի և հասարակության միջև եղած հակասության, այդ հակասությունից ծնված ապրումի էնպիրիկ արտահայտությունն է: Ձեյնս Զոյսի կարծիքով գրականության մեջ թույլ ենք տալիս պայմանականություններ, ըստ այդմ էլ նա գրականությունը համարում է արվեստի ցածր ձև: Ընդունելի է, եթե այդ պայմանականությունները պատահական ու մտացածին լինեին: Ուրեմն տեսիլը դեռևս պոեզիա ու պրոզա չէ: Կարևոր տեսիլի նիշոցով վիճակի ապրումն է և, բնականաբար, վիճակի տպավորության հաղորդումը: Որբերտ Եսայանի գրական ստեղծագործական ուղին ոչ միայն ինքնահաղթահարնան, այլև վիճակի տպավորությունների հաղթահարնան ամբողջական անձիրություն է: Նա ընթերցողին՝ հայտնի է իիմնականում «Հենակետեր», «Ծարաված հետքեր», «Տարածություն և հոգի», «Նժար», «Քառս և լուս», «Սիրո գիրք», «Դիտագիծ», «Դիշատա-

կի ափ», «Ելք», «Երազի սահանքներ», «Ամդրժամանակի հենարաններ» ժողովածումերով: Ու եսայանը բազմաժանր հեղինակ է: Գրել բանաստեղծություններ, պատմվածքներ, պոեմներ, սոնետներ և այլն:

Սոնետներում, հատկապես, նոր ու անսովոր են հոգեբանական, գեղագիտական իրադրությունները: Բանաստեղծը առանձին բանելուստների նկատմամբ այնպիսի հետարքորդություն ու համակրանք է տածում, որ այդպիսիք ընդարձակում են իրենց սովորական իմաստային սահմանները վերածվելով ընդգրկուն հասկացությունների բազմիմաստ սիմվոլների: «Լարոտ», «Երազ», «հոգեվարք», «Վիխ», «սարսու», «հուշ», «սպասում», «տագնապ», «սահման», «տառապանք», «պատահողն», «հայացք», «հենակետեր» և այլն: Օրինակ «Այդ անունը չէ սոնետում, չնայած պոետական իր ներքին բախտութ տրամադրությանց, ամփոփիչ տողի հոգեվարքը /«Ես համբույրների ճերմակ հոգեվարք»/ ընկալվում է նաև գունափայլ մի ամբողջ աշխարհ իր բազմակերպ երանգներով ու ապրումների անսահմանությանը: Իսկ ահա հակառակ երևույթն է տեղի ունենում «Քիշողությամ բեկորում» /«մայրի ստեղների վրա փոշին նվազում է հոգեվարքը աստղիս»/: Այսիւդա, ծիշտ է, հոգեվարքը եղերական է, բայց մայրի ստեղները մի անտես, հոգեթռվ պայծառություն են ճառագում... փոշին, որ նվազում է աստղի հոգեվարքը, դրամատիկ լիցք է հաղորդում բանաստեղծության հոգեվիճակ-ապրումին:

Գյոթեն ասել է օդից վերցված բանաստեղծությունը ես այլ ինչ եմ համարում, ուստի տրամարանական է, որ բանաստեղծության համար ընդունվում է միայն մեկ սուրստանց ասելիքը, պատկերավորնամ միջոցները, գաղափարը... միահյուսված որպես մի միասնություն, բայց ու եսայանի պոեզիան այնքան հարուստ ու իմքնքտիպ է, որ ակամայից երեվակվում է երկրորդ սուրստանցի անհրաժեշտությունը, այսպես ասած, բանաստեղծական դուալիզմը: Առաջինը վերը նշվածը և երկրորդ բանաստեղծությունը, որպես զուտ կոլորիտ ուրույն բարպատկերներով, փոխարեւություններով, լուսավոր ու բախմուտ երանգներով, ենցիոնալ մի աշխարհ /ուր բազական է բեկորը մեկ անհարի բառակապակցությունը կամ երկողը/, որտեղ առանց գաղափարը որսալու հնարավոր է հանգիստ ապաստանել, լիանալ ու չձանձրանալ: Ասենք «սահանքներում անուրջի» կամ «մի տեղ ընոշինում ենք աստղեր սիրո բասից», «գգվանքի վրան», «հուշերի պարսը իմաս օրդորում է երեկոն»... Սակայն պետք է նկատել, որ պոետը, հակատարիմ մնալով բառապատկերային իր սկզբունքին, հաճախ է անկրահելի պատկերներ ստեղծում թողնելով այնպիսի տպագորութ-

յուն, որ ասելիքը ներկայացված է նաև բառային հանդերձի դուրս. այս դեպքում արդեն բոլոր նույրումները առնչվում են անհմանակի խաղի բավկիներին: Օրինակ «պատերի երակ», «արցունքի թիր», «անդրորի բարձ», «խոշի ուսեր», «վարսերի փոթորիկ», «վայրկյանների բոլորուներ», «կեղևաբափվող բայլեր», «տենդի գագաբներ» և այլն: Բայց դա չի նշանակում, որ Ու եսայանը ինչ-որ տեղ նաև բանաստեղծական ներշնչումների հորինաբանող է: Նա կյանքի վկան է և իր վկայությունն արդեն բանաստեղծություն է, շոշափում ու պոտուական վերապրում:

Պոեմը հեղինակի նախասիրած բանաստեղծական կառույցներից է: Կերպինս նախևառաջ վկայում է հեղինակի լայն կտավի վրա ընարական պատումներ ներկայացնելու ունակությունը: Գրքում տեղ գտած «Խոռվը» և «Ծակատագրի լուսանցքներում» պոեմները նեկը նյութ տրամաբանական շարունակությունն են: «Խոռվը» արծագանքում է Դարաբաղյան շարժման խմբումների ծակատագրական հրազդանություններին արտահայտնողվ հեղինակի խոռվը բաղադրական որոշ երևույթների նկատմամբ: «Օրորոցը կուրանում է աչքի նման», «գոյության զանգերը թիւ է մնում կորցնեն իրենց հիշողության վերջին լեզվակները», վերջապես սոցիալիզմի կաղապարը/«կարմիր ծաղրը»/ մի անտարբեր լուսությամբ հոշոտում է ճարդկանց հոգիները: Ի՞նչ անել, մի՞թե հնարավոր է անտարբեր անցնել, երբ մի ողջ ժողովրդի ծակատագիր օրորվում է կործանման անդունից կախված: Բանաստեղծի տագնապներ խորանում են, և նա դիմում է ժողովրդին.

Չինա՞ է դու պիտի լրես

Ու չիանես Սպարայրի գոռ պատյանից  
Մնբակացայտ փոշիներից սրված թուրդի...

Մանավանդ, որ բազմիցս արդեն հաղթահարել ենք այլ և անդունից: Պոեմում կենտրոնական տեղ է գրադեցնում նաև Սեծ եղեռնի թեման: Պատմության բառուղիներում հուշարձանված ժողովրդի ցավն ու տառապանքը այնուղ յուրովի է ապրում, գայորություն ու սրտի կսկիծովն լսում «կեռ թրերի պողպատախ շառաջունը», որոնք հատեցին բանիքանի կյանքի երակներ.

Կեռ թրերը պողպատախ շառաջունով  
Պատյաններն են լուս իրենց, ինչպես օքը  
Մաշկը իր իմն: Եվ խրվելով անմեղ սրտեր  
Թեն հագենում: Նրանց իդձն են ծեղքում նաև  
Ու դուրս հանվում, որպես կարմիր  
Կիսալուսին,

Որի ծայրին պսպղում է տենչն ապրելու...

Ի՞նչ արած, ճակատագիրն արդեն կատարվել է, ու բաց են լուսանցքները, որտեղ և պոետը գրում է իր կրակված սրտի երգերը: Յաջորդ պոեմում հեղինակը խոսում է հենց այդ լուսանցքների մարդանհատի ինքնավորունման ճանապարհի մասին, որը մերկայացված է տառապանքի հետ ներփակված որպես նի կուռ կառուցվածք, թեև հավերժական շարժման մեջ է ալեբախվում նշտարորբոք թեմանեվ քննկան է, որ քննողն ու դատողը «խավարի այդ ճամփիկները», հեղինակը համեմատում է լոկ սրի ու պատյանի հետ:

Արդ քննողն անգամ և դատողը մեծ  
Շարժվելով դեպի խորք իրերի  
Դեռ ճակերեսի փառը շիատած  
Ետ է շպրտվում ահից խորքերի

Ետ է ընկրկում-սուր լինի ասես

Մի սուր են քաշած իր իսկ պատյանից:

Ու, այսպես, լրված, միայնակ, կարուտների ու լիդերի մի տնանկ ամբոխ պարզապես առաջանում է երազների հրե սյուներին խաչված:

Պոեմը ագգի գոյության իմաստավորումն է անկախ ամեն ինչից:

Թեմատիկ առումով ավելի լայն են «Յաղորդության շղթա» պոեմի շրջանակները: Կերպինս պոետի 1990-2001 թթ. մտորումների, հույզերի ու տրամաբանությունների արձագանքն է, անցած ճանապարհը, որը սերտ կապված է իր ժողովրդի ապրումների մայրուղում, ու թվում է, եթե ամեն ինչ պիտի հուշ դարձնար ու պատմություն, այս հենց այդ հուշի ու պատմության միջից հնչեց «Յաղորդության շղթան»:

Պոեմում հեղինակը մերք դիմում է պատմությանը, մերք վերակենդանացնում նախնաց հիշատակները, երբեմն թափառում հալածական հայի հետ /այստեղ անգամ նայիրյան որբերի ծիչն է լսելի/, հաճախ նայում օրվա կյանքին, մեղքի պտույտում սկավառակվող մարդուն, մերք հասնում հայրենի գուղջը, գրուցում հոդարույր մարդկանց հետ, մերք խառնվում մանուկներին ու մանկանում նրանց հետ... ու այս ամենը սիրո չնաշխարհիկ կամարի տակ:

Պոեմի ելակետը երեքանքի հատակն է, որտեղ պոետը պառկած մտորում է, իսկ շուրջը մահ է, դիակներ, սրատված երազներ... կատարյալ դանքեական առասպել.

Ծուրջս ուսկորներ

Պարկութների խղճի, որոնց լույսն ի վեր

ասես տանում է թագն արեգակի...

Պոեմն ինքնակենսագրական բնույթ է կրում: ԵՎ չնայած ցավալի, բայց բնական է, որ գրողի կյանքի նախորդ տարիների գումարը իր մեջ պարունակում է վիշտ ու տառապանքի, խտացված ցավի, գոյատևման ճիգերի, ողբերգության, ամորի և գայրույթի, ըմբռտացնան, սիրելիների կորուսի բազում գումարելիներ. «Դայրենի քաղաքի փողոցներում արդեն պատվում են անենածանր մերժանմեռ», «մանկության ճանապարհների երակներն են լողում արյան ծովի վրա», «լույսից ծովս է ելուում», «ճակատագիրը մանկան ճիշերով դագաղներ է մեխում».

Ի՞նչ տխուր է,

Երբ վառվում է ծխախոտդ,

Երբ ներքաշում ես անհագ ցավի ծուխը,

Եվ նոխիղը թափում թարթիշներին օրվա...

Օղից պատերազմի հոտ է մշում:

Այնուեւս պիտուր տալիս է պարետային ժամանակների «Երազողի» կերպարը: Ժամանակներ, երբ դամոկլյան սարսափն էր տեր ու տիրակալը, և «ի՞նչ հաճելի լր բազմած» երգստենցինալ տագնապը... հեղինակը գրում է:

Եվ Ոգին է թափարակում ամենօրյա

դիպվածի.

Ծունչն է հատվում երգերի և տապամարար է դատուուն

Բռ շրբունքը, երազո՞ղ, երբ այն պարզում ես լուսի

Խայտանքներին ընդառաջ... միտքն է դարձյալ գլխատվում

Ծեղրով հոսող ավազի:

Այստեղ հոսող ավազը համեմատվում է դահիճի հետ, որին, սակայն, հակառակություն է գինվորը, որպես իմաստության, քաջության, ուժեղ անհատականության մարմնցում, որը մշտապես գտնվում է ապագայի դեմ հանդիման, նահիւս դեմքի առջև. իր գործողությունների համար պատասխանատվության հրավիճակում, և որին էլ վերապահված է փրկության ու պատության առավագացյան:

Բայց ճամփաս հույս է կծկում ու երազ

Հատու քայլով գինվորի.

Եվ պատուհանն է բացվում,

Ուրիմ մահն է բացակա...

Քնարական հերոսը մենակ է իր խոհերի ու ապրութերի առանձքում: Ծուրջը համատարած անտարբերություն է, կուրքերն են փլչել աշխարհի պատվանդաններից, նույնիսկ լոռությունն է այստեղ գլխատվում, մինչդեռ դարն էլ արծագանքելու ցանկություն չունի: Ու՞մ դիմել, ի՞նչ անել, երբ տվայտանքը հազար թելերով գորդյան հանգույցներ է հինում, «Երբ աշխարհը դիմակի պես ընկնում է ամայի պատվանդանի ոտքերի տակ»: Անրոշությունը պարուրել է պոետին լինել թե չլինել այն պայմաններում, երբ և՛ սարսափելի է, և՛ ծանծրալի, և՛ անհերեր: Ահա այստեղից էլ բարձրանում է կյանքի և նահկան եսայանական փիլիսոփայությունը: Ունայնությունը հաղթահարելու հնար է պահի ապրումը, քառի եղողը սառեցնելու գրավական մեկ անգամ ևս խորհելը, խավարից դրւս գալու ելք նաև հիշողությունը: Աւ պոետը վերապրում է իր մանկությունը, պարզապես, ուրիշ երեխայի մեջ: Մանկություն, որն այնքան նման է «գլխատված թռչնի», և որի թևերն են իջնում պոետի հուշերի վրա, վերհանելու վերջինիս կարուտների տիեզերական լույսը:

Պոետը ծեռքը պարզելով մանկությանը, անցնելով միամտության ու երանության հորիզոններից անդին, վերապրելով բազում տառապանքներ, ավերված ու դատարկ տան ողբերգություն, չի ծգտել քավարարվել ինքնասփոփման տարրերով, միանալ ցավի մեջ ապրողներին, այլ շնորհած յուրօրինակ ելք. նոր կյանքի շեմ, որտեղ էականը ստեղծագործական պոռթկումն է, արարումը, անընդհատ որակական փոփոխությունների հոսքը, տևողությունն ու անցավորությունը...մի խոսքվ կյանքը տիեզերական պլանով.

Գագարն իմ լեռան ոչ թե փառքի հանգած

կրակ է մի ունայն,

Այլ ծնվողի ճիշ, որով օղակվում է տիեզերքի

հաղորդության շղթան...

Սորերտ եսայանը մտածողության բազմաշերտությամբ, իր պոեզիայի ժանրային առանձնահատկություններվ, բանաստեղծական նորարարությամբ միանգամայն ինքնատիպ է և հենց ինքնատիպությամբ էլ կարողացավ կայանալ որպես ժամանակաշրջանի նոր մտածողթանաստեղծ:

ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,  
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:  
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ  
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,  
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

  
ПОЛИГРАФ